

Գավառ և Սևան համայնքներում
համայնքային հիմնահարցերի ուսումնասիրության
հարցման արդյունքների ամփոփում S

Հայաստանի բյուջետային վերլուծությունների ծրագիր

Երևան 2003

**Գավառ և Սևան համայնքներում
համայնքային հիմնահարցերի ուսումնասիրության հարցման
արդյունքների ամփոփում**

Հայաստանի բյուջետային վերլուծությունների ծրագիր

Երևան 2003

Հարցման կառուցվածքը

Ներածություն	3
Համայնքների վիճակի գնահատականը 2002-ին.....	7
Միջոցառումների դասակարգումն ըստ կարևորության	8
Համայնքապետարանների աշխատանքի գնահատականը.....	10
Համայնքապետարանների որոշ քայլերի անհրաժեշտության գնահատականը.	13
Ինչ կցանկանայիք, որ ունենար Ձեր համայնքը, որ առայժմ չունի ..	15
Ձեր առաջարկությունը համայնքի ղեկավարին	16
Ձեր առաջարկությունը համայնքի ավագանուն	17
Հարցվածների առաջարկությունը համայնքի բնակիչներին.....	19

Ներածություն

2003 թվականի ապրիլ ամսվա ընթացքում ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքում ՏՀՀ Կենտրոնի կողմից անցկացվեց համայնքի հիմնահարցերի ուսումնասիրություն: Սոցիոլոգների կողմից նախօրոք մշակված հարցաթերթը լրացրեցին համայնքի 88 բնակիչներ: Այնուհետև, սույն թվականի օգոստոս ամսվա ընթացքում նույն հարցաթերթը լրացրեցին նաև Գավառ քաղաքի 90 բնակիչներ: Չնայած նրան, որ քաղաքները միևնույն մարզի տարածքում են, այդուհանդերձ հիմնախնդիրները ինչպես միևնույն, այնպես էլ հաճախ տարբեր հուն են մտնում՝ պահանջելով յուրօրինակ մոտեցում՝ կախված տարածքի աշխարհագրական և ժողովրդագրական առանձնահատկություններից:

Սույն վերլուծությունն առնչվում է այնպիսի հիմնահարցերի, ինչպիսիք են համայնքներին հուզող խնդիրների բացահայտումը, համայնքապետարանների կողմից որոշ միջոցառումների անցկացման անհրաժեշտությունը, ինչպես նաև համայնքապետարանների աշխատանքների և կատարած քայլերի գնահատումը: Համայնքների հարցված բնակչության առաջարկությունները համայնքների ղեկավարներին, ավագանիներին, համայնքների անդամներին խմբավորված են և ներկայացված ըստ կարևորության գնահատման: Վերլուծության մեջ մեծ տեղ է հատկացված հիմնահարցերի համեմատական բնորոշմանը և դրանց լուծման առանձնահատկություններին երկու քաղաքներում էլ:

Հարցման արդյունքներից կարող են համապատասխան հետևություններ անել.

- ◆ համայնքների ավագանիները՝ համայնքների բյուջեների պլանավորման և քաղաքապետերի գործունեության վերահսկման գծով.
- ◆ համայնքների ղեկավարները՝ համայնքների վիճակի բարելավմանն ուղղվող միջոցառումների և բյուջեների նախագծերի կազմման հարցերում.
- ◆ հասարակական կազմակերպությունները՝ ավագանու և քաղաքապետարանի աշխատակազմի վերապատրաստման և խոհրդատվության հարցերում.

- ◆ պետական կառավարման համապատասխան մարմինները՝ համայնքապետերին տրվող պարտադիր և պատվիրակված լիազորությունների վերահսկման գծով.
- ◆ քննարկվող օբյեկտի հիմնահարցերով հետաքրքրված գիտնականներն ու ինստիտուտները՝ վեր հանված հիմնահարցերի և առանձնահատկությունների մասով:

Չարցման մի բաժինը բնորոշում էր հարցվածների սեռատարիքային կազմը և կրթությունը, ցույց տալու համար, որ համայնքի բնակչության գրեթե բոլոր հատվածները ներառված են հարցվողների թվում:

Չարցվածների սեռը

	Սևան	Գավառ	Սևան-%	Գավառ-%
Արական	53	49	60	54
Իգական	35	41	40	46
Ընդամենը	88	90	100	100



Չարցվածների տարիքը

	Սևան	Գավառ	Սևան-%	Գավառ-%
18- 35 տարեկան	28	38	32	42
35- 55 տարեկան	37	23	42	26
55- 75 տարեկան	23	29	26	32
Ընդամենը	88	90	100	100

Չարցվածների կրթությունը


	Սևան	Գավառ	Սևան-%	Գավառ-%
Բարձրագույն	36	37	41	41
Միջն. մասնագիտական	12	30	14	33
Միջնակարգ	27	23	31	26
Չիմնական	13	0	15	0
Ընդամենը	88	90	100	100

Ստորև բերվող գրաֆիկական ամբողջ վերլուծությունը ներկայացված է տոկոսային համամասնությունների առումով, իսկ սկզբնական տվյալների բացարձակ մեծությունները տրվում են աղյուսակների տեսքով:



Սևան քաղաքում գերակշռում են հարցված արական սեռի ներկայացուցիչները, իսկ Գավառում հարցվածների սեռային հավասարակշռությունը գրեթե պահպանված է:

Գավառում հարցվածների մեջ գերակշռում են երիտասարդները, իսկ Սևանում՝ միջին տարիքի մարդիկ: Սա, թերևս, ազդում է հարցման արդյունքների վրա, քանի որ տարբեր տարիքային խմբերի մարդիկ տարբեր են տեսնում քաղաքների հեռանկարը և, ըստ այդմ, տարբեր պատասխաններ են տալիս համայնքի հիմնահարցերի վերաբերյալ:




Ներքոշարադրյալ վերլուծությունը կատարված է հարցաթերթի կառուցվածքից ելնելով:

Համայնքների վիճակի գնահատականը 2002-ին

Ինչպես կգնահատեք Ձեր համայնքի վիճակը 2002- ին

	Սևան	Գավառ	Սևան-%	Գավառ-%
Մեծապես առաջընթաց է ունեցել	0	1	0	1
Մասամբ առաջընթաց է ունեցել	54	16	61	18
Մնացել է անփոփոխ	16	54	18	60
Որոշ չափով վատթարացել է	17	14	19	16
Մեծապես վատթարացել է	1	3	1	3
Դժվարանում եմ պատասխանել	0	2	0	2
Ընդամենը	88	90	100	100



Այն, որ Սևան համայնքի բնակիչների մեծամասնությունը համայնքի սոցիալ-տնտեսական առաջընթաց է նկատում, վկայում է հանրապետությունում նկատելի տնտեսական աճի Սևան համայնքում արտացոլման մասին: Թերևս, Գեղարքունիքի մարզում վերոհիշյալ հարցին միայն Սևանի բնակիչները նմանօրինակ պատասխան կտան, քանի որ, թեկուզ սեզոնային, այդուհանդերձ ամռան և աշնան ամիսներին տուրիզմի

և գյուղատնտեսության ակտիվացում է նկատվում: Ցավոք, Գավառ համայնքում հարցվածների մեծամասնությունը գտնում է, որ համայնքի վիճակը մնացել է անփոփոխ: Սա լուրջ մտահոգության տեղիք պետք է տա համայնքային իշխանություններին: Ներկա պայմաններում բնակչության սոցիալական վարքագծի հիմնական մոտիվները թաքնված են համոզմունքների մեջ, և Գավառում ճգնաժամային մտածելակերպը, համադրվելով սոցիալական լարվածության հետ, անորոշ հեռանկար է ստեղծում ցանկացած լավ ձեռնարկի համար:

Միաժամանակ մտահոգիչ է բնակչության այն հատվածի վիճակը, որոնք վիճակի լճացում կամ վատթարացում են տեսնում: Եվ, եթե հաշվի առնվի այն փաստը, որ հարցվածների մոտ 40%-ը նմանօրինակ վիճակում է, ապա համապատասխան պետական և համայնքային կառավարման մարմինները պետք է մտահոգվեն նշված փաստով:


Միջոցառումների դասակարգումն ըստ կարևորության

Հարցաշարի մի հատվածը վեր էր հանում համայնքապետարանների կողմից իրականացվող հնարավոր միջոցառումների կարևորությունը:

Դասակարգել ներքոշարադրյալ միջոցառումներն ըստ կարևորության

Նշված միջոցառումը ամենակարևոր գնահատողների թիվը	Սևան	Գավառ	Սևան-%	Գավառ-%
Համայնքի ճանապարհների վերանորոգում	61	48	69	53
Համայնքի բարեկարգում	7	19	8	21
Աղբահանություն	7	13	8	14
Մանկապարտեզների բարելավում	6	3	7	3
Մշակութային հիմնարկների զարգացում	6	5	7	6
Կապիտալ շինարարություն	1	2	1	2
Ընդամենը	88	90	100	100

Միջոցառումների կարևորությունը



Տրված պատասխանները վկայում են համայնքների որոշ հիմնախնդիրների մասին: Ամենաեական միջոցառումը, որը սպասում են համայնքի անդամները համայնքապետարանից, ճանապարհների վերանորոգումն է: Հարցվածների մեծամասնությունն այդ միջոցառումը գնահատել է ամենակարևորը, մնացածները նույնպես մեծ նախապատվություն են տվել դրան: Գավառում վերջին ամիսներին ճանապարհների վիճակի մասնակի բարելավումը որոշակիորեն մեղմել է բացասական հասարակական վերբերմունքի ալիքը, սակայն վիճակը այնքան աղետալի է, որ ամենափոքր դրական տեղաշարժն իսկ արդեն դրական լայն արձագանք է գտնում:

Միանման կարևորություն ունեն համայնքի բարեկարգումն ու աղբահանությունը: Հարցվողների գնահատմամբ, ճանապարհների վերանորոգումից հետո կարևորությամբ երկրորդը բարեկարգումն ու աղբահանությունն են: Այս հարցադրման պատասխանների մեջ մեծ է Գավառում հարցվածների տեսակարար կշիռը, քանի որ հիմնախնդիրն իսկապես արդիական է, իսկ համայնքապետարանը քիչ քայլեր է ձեռնարկում իրավիճակը շտկելու համար:

Բացի վերը նշված էական միջոցառումներից, հարցվողները կարևորել են նաև մանկապարտեզների և մշակութային հիմնարկների բարելավումն ու զարգացումը:



Անցումային տնտեսությանը բնորոշ կարճաժամկետությունը իր արտահայտությունն է գտել նաև հարցման արդյունքների մեջ: Այսպես, հարցվողների միայն մեկ-երկու տոկոսն է ամենամեծ կարևորությունը տվել կապիտալ ծախսերի կատարմանը: Ներկա պայմաններում, եթե առկա ռեսուրսների մի մասը չներդրվի կապիտալ ծախսերի մեջ, անխուսափելի կլինի արտադրական, կրթական և մշակութային ենթակառուցվածքների փլուզումը: Հետևաբար, անկախ համայնքի անդամների վերաբերմունքից, համայնքի բյուջեի պլանավորման ժամանակ ծախսերի 20- 30 %-ը պետք է ծրագրավորվի կապիտալ հատվածում:

Համայնքապետարանների աշխատանքի գնահատականը

Հարցաթերթի մեջ անդրադարձ է կատարվել նաև համայնքապետարանների կողմից կարգավորվող որոշ կարևոր ոլորտներում կատարված աշխատանքների գնահատականին:

Գնահատել համայնքապետարանի աշխատանքը հետևյալ ոլորտներում

	Դրական		Բացասական		Դժվարանում եմ պատասխանել	
	Սևան	Գավառ	Սևան	Գավառ	Սևան	Գավառ
Կրթական ոլորտ	0	28	88	40	0	22
Մշակութային ոլորտ	45	14	23	48	20	28
Բնակարանային-կոմունալ տնտեսություն	8	5	39	58	41	27
Ճանապարհային տնտեսություն	48	28	12	41	28	22
Հարկերի և տուրքերի հավաքագրում	88	11	0	40	0	39



Կրթական ոլորտի նկատմամբ բացասական վերբերմունքը հատկապես ակնառու է Սևանում: Հավանաբար, մանկապարտեզների աշխատանքից դժգոհությունների թիվը շատ է, ինչը խոցելի խավերի ընտանիքների համար բարդություններ է ստեղծում երեխաներին մանկապարտեզ ուղարկելու հարցում: Գավառում նույնպես մանկապարտեզների թիվը և աշխատանքային գրաֆիկը դրական տենդենց չեն արձանագրում: Բնակչության դրական պատասխանների թիվը այս ոլորտի գնահատման ժամանակ առավելապես անտեղյակության արդյունք է. պատասխանը տրվել է ոչ թե համայնքապետարանի ենթակա, այլ ընդհանուր կրթական համակարգի վերաբերյալ:

Չարկ է համարվում նշել, որ «Փրկեցեք երեխաներին» կազմակերպության կողմից Սևանի քաղաքային մշակույթի պալատի վերանորոգումը էականորեն փոխել է սևանցիների գնահատականը քաղաքապետարանի կողմից մշակութային ոլորտում կատարած միջոցառումների նկատմամբ: Այնինչ Գավառում իրավիճակը այլ է. առկա է մասսայական բացասական վերաբերմունք, քանի որ մշակութային միջոցառումների սակավությունն ու մշակութային օբյեկտների անարդյունավետ աշխատանքը հատկապես երիտասարդության հիմնական խնդիրներից են:

Մարզում բացառիկ է նաև սևանցիների վերաբերմունքը ճանապարհային տնտեսությանը: Բնակչության կեսից ավելին դրական է գնահատել քաղաքապետարանի ջանքերն այս ոլորտում: Գավառում ճանապարհային տնտեսության աղետալի վիճակը արտացոլվել է նաև հարցվողների տրված պատասխաններում:

Բնակարանային-կոմունալ տնտեսության կարգավորման նկատմամբ բացասական վերաբերմունքը կարող է բնորոշել համայնքապետարանների աշխատանքների առաջիկա պլանավորման ուղղությունները: Բացթողումներն այս ոլորտներում հիմնականում պայմանավորված են միջոցների սղությամբ, որն էլ բացատրվում է տեղական բյուջեների միջոցների հավաքագրման ցածր մակարդակով:


Չարկերի հավաքագրման ցածր մակարդակը Սևանում բնակչության կողմից գնահատվել է դրական, մասնավոր և կարճաժամկետ շահերի գերակայության պատճառով: Բացի այդ, բնակչության ոչ բավարար տեղեկացվածությունն է նմանօրինակ տպավորություն ստեղծում: Դեր է խաղում նաև այն հանգամանքը, որ Սևանում հողի հարկի պլանային մեծությունը փոքր է և համայնքապետարանի ու համայնքի անդամների միջև այս ոլորտում էական հակասություններ չեն առաջանում: Ի տարբերություն դրա, Գավառում, բնակչության հետ տարվող աշխատանքի և հարկահավաքման դիսկրիմինացիայի հետևանքով հարցողները բացասական են գնահատել համայնքապետարանի աշխատանքը այս ոլորտում:

Համայնքապետարանների որոշ քայլերի անհրաժեշտության գնահատականը.

Համայնքների հարցված բնակիչները հետևյալ կերպ են գնահատել համայնքապետարանների որոշ քայլերի անհրաժեշտությունը.

Նշել հետևյալ քայլերի անհրաժեշտությունը

	Անհրաժեշտ է		Անհրաժեշտ չէ		Անհրաժեշտ է %		Անհրաժեշտ չէ %	
	Սևան	Գավառ	Սևան	Գավառ	Սևան	Գավառ	Սևան	Գավառ
Համայնքապետարանի աշխատակազմի կրճատում	75	53	13	37	85	59	15	41
Կապիտալ շինարարության աճ	70	59	18	31	80	66	20	34
Բյուջեի մեջ աշխատավարձի բաժնի կրճատում	58	60	30	30	66	67	34	33
Բյուջեի եկամուտների հավաքագրման աճ	22	68	66	22	25	76	75	24
Բյուջեի ծախսերի վերահսկելիություն	26	73	62	17	30	81	70	19
Համայնքի ղեկավարման մեջ մասնակցություն	60	59	28	31	68	66	32	34



Համայնքապետարանի և դրա ենթակայության հիմնարկների աշխատակազմի կրճատման անհրաժեշտությունը պայմանավորված է համայնքի միջոցների օգտագործման նպատակայնությամբ: Նորընտիր համայնքապետերը սովորաբար կազմավորում են իրենց ենթակա աշխատակազմերը ընտրությունների ժամանակ հատկապես աչքի ընկած մտերիմներով, ինչի հետևանքով աճում է համայնքի ստեղծած աշխատատեղերի քանակը, սակայն նվազում է աշխատակիցների մասնագիտական որակը, իսկ հարկատուները միջոցների նմանօրինակ ծախսը արդարացիորեն համարում են անարդյունավետ և ոչ նպատակային: Այս հանգամանքը պետք է գրավի հատկապես ավագանու ուշադրությունը՝ կանխելու համար բյուջետային միջոցների ծախսման անարդյունավետությունը:

Հարցման այս հատվածում համայնքի հարցված բնակչության մեծամասնությունը գտնում է, որ համայնքի բյուջեի ծախսերը պետք է կողմնորոշվեն առավելապես դեպի կապիտալ ոլորտ (ի տարբերություն կարճաժամկետ ընթացիկ ծախսերի), քանի որ համայնքին սպառնում է կրթական, մշակութային և արտադրական ենթակառուցվածքների քայքայում:

Բնակչությունը մեծ է գնահատում նաև համայնքի կառավարման գործընթացում համայնքի անդամների մասնակցության հարցը: Ցավոք, ներկայումս այն բավական ցածր մակարդակի վրա է, սակայն, մարզի մնացած համայնքների համեմատությամբ, որոշ դրական տեղաշարժ Սևանում նկատելի է: Գավառում համայնքի անդամները էական են համարում բյուջեի ծախսերի վերահսկելիության և կառավարման գործընթացներում մասնակցության աճը: Սա դրական տեղաշարժ է և հույս է ներշնչում, որ համայնքապետարանի աշխատանքների հասարակական վերահսկողության մեխանիզմների ստեղծումը Գավառում դառնում է գիտակցված անհրաժեշտություն:

Ինչ կցանկանալիք, որ ունենար Ձեր համայնքը, որ առայժմ չունի

Հարցման այս հատվածը հուշում է համայնքապետարանի հետագա անելիքների հերթականությունը:

Ինչ կցանկանալիք ունենար համայնքը, որ այժմ չունի

	Սևան	Գավառ	Սևան-%	Գավառ-%
Եկեղեցի	24	0	27	0
Մանկական զբոսայգի	35	0	40	0
Պուրակ, ծառուղի	17	43	19	48
Սպորտային հրապարակ	12	0	14	0
Ինտերնետ ակումբ	0	4	0	4
Լողավազան	0	2	0	2
Գործող քաղաքապետարան	0	13	0	14
Աշխատատեղեր	0	10	0	11
Բարեկարգ փողոցներ	0	2	0	2
Մշակութային օջախներ	0	16	0	18
Ընդամենը	88	90	100	100

